

զանին վրայ ցան ու ցիր այդ թղթիկները «Աղօրիք»-ի: Ժպտուն ըսաւ. վերցուր, Բիւրատ, մեծ բան մը չէ:

Հացին յարուրինը

1915 թուի Ապրիլի 11/24-ի առաջին ժամը 2.30-ին «Գրամը սիյասի պլերինճի շիւպէի» քաղաքական բաժնի ղեկավարի ուստիականութեան պետերը կը խոսեն վարուժանի բնակարանը եւ կը հաւաքեն աւոր ձեռագրերը, կազմուած հատորներ ու տետրակներ:

Անցան անիծեալ տարիները եւ 1919 թուի Մայիս ամսու մէջ գացի փնտռել հօրս ձեռագրերը, որոնք նոյնպէս բռնադատուած էին: Նախապէս կաշառքով թոյլտուութիւն վերցուցի հայագէտ Ահմէտ Սեւալի Պէյէն եւ մտայ այն նկուղները, ուր Մեծ Եղեռնի զոհ գրողներու ձեռագրերը պահուած էին: Միայն կարողացայ գտնել կազմուած «Լեռնականի մը յուշատետրը»: Սակայն «Լեռնի կոյսը 1630-1650 թթ.», «Զէյթունի Զարման» հերոսութիւն վրայ վէպը, «Խուժանի կուռքը» եւ «Արշակ Բ.» պատմական մեծ վէպը, որոնք տետրակներու մէջ էին գրուած, ձեռքը վառարանին էին յանձնած:

Յանկարծ նշմարեցի վարուժանի այրին, Արաքսին, որ նոյնպէս եկած էր փնտռելու ամուսնոյն ձեռագրերը:

Ի՞նչ մեծ բախտ եւ հրճուանք... կազմուած գտնուեցաւ ՀԱՅԻՆ ԵՐԳԸ:

1926 թուին, երբ վերջնապէս պիտի հեռանայի Կ. Պոլսէն, անմահ նահատակին ինձ տուած «Աղօրիք»-ի սեւագրութիւնները տարի եւ յանձնեցի Ս. Գրիգոր Լուսաւորիչ լիցէի Մեծաւորին, որ այդ մասունքները զրկէ վեհեմիկ, Ս. Ղազարու Մատենադարանը:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ

Նոր Նաքիկացին

1913 թուին առաջին անգամ տեսայ զինք Խաղիկ, Հարճ օղլու գիւղի բնակարանը: Առաջին իսկ տեսնելուս Կոմիտասին, վրաս մեծ տպաւորութիւն թողեց, վառ-

վռուն աչքերը, լուսաշող ճակատը եւ ձայնին զօղանքը դեռ կը յիշեմ:

Կոմիտաս, ի՞նչ հմայիչ եւ ողբերգական. հայ ազգի նոր Նաքիկացին:

Նախապէս հայրս Կոմիտասին թղթակցութեամբ ճանչցած էր, երբ 1907 թուին Լայիցիկի մէջ հրատարակուեցաւ «Հայ գեղջուկ երգեր»-ու առաջին տետրը, որը ուղարկած էր հօրս՝ Փիլիսիկ շարաթաթերթին:

1913 թուին Կ. Պոլիս, հայրս կ'առաջնորդէ Կոմիտասին Սուլթան Աղլիկ որդու՝ դահաժառանգ Եոսուֆ Իզեդէին էֆենտիի, որ արուեստի սիրահար լինելով, կ'ընդունի բացառիկ պատիւներով եւ կը խնդրէ որ դաշնամուրի դաս տայ իրեն: Մեծ երգիչը սիրալոյսով կ'ընդունի եւ դահաժառանգ իշխանը անքակտելի կապերով կը մնայ Մեծ վարպետին հետ:

Հայկական գանձերը

Կ. Պոլիս հնաւանդ սովորութիւն կար Ղալաթիոյ թաղամասը, հնադարեան Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ, ամէն հինգշաբթի օրեր բացառիկ պատարագի արարողութիւն կատարել, եւ Կոմիտաս իր նորակազմ երգչախումբով, Ամենափրկչի սեղանի դասէն կը կառավարէր «Հայկական դանձերը»:

Մանաւանդ չի մոռացուիր 1914 թուի Մեծ Պահլի Խորը շարաթներուն Կոմիտասեան քառամայն պատարագները, նոյն եկեղեցիին մէջ:

Անմոռանալի յիշատակի օր եղաւ 1913 թուի Սեպտեմբեր ամսուն, ի յիշատակ Հայոց զրեւու գիւտի 1.500 եւ տպաւորութեան 400 ամեակի առթիւ Կոմիտասի կազմակերպած մեծ նուագահանդէսը, իր երեք հարիւրնոց երկսեռ աչակերտներով, որուն հովանաւորութիւնը սիրալոյսով ընդունած էր դահաժառանգը:

Այդ օրը Կոմիտաս հասած էր իր փառքի գաղաթնակէտին, հիացմունքի առարկայ լինելով օտարազգի եւ թուրք բարձր դասուն. ա'լ աւելին, դաւաճահայ զարիւր հայրուն սրտազին հրճուանքին:

Այս նուագահանդէսը ոչինչ կ'արժէ

Կեղրոնական բարձրագոյն վարժարանի սրահին մէջ, Կոմիտաս, առանց որեւէ նիւթական ակնկալութեան, բացած էր հայկական երաժշտութեան դասընթացը մը: Յաճախ իր Մովսէսի մոգական դաւադանիկով կարող էր երեք հարիւրէ բաղկացած երգչախումբը լուրթեան մէջ պահել, երբ թերութիւն մը, անխորժ հընչիւն մը լսէր: Ունէր նաեւ երգիծական սուր կամ թիւեր ընելու կարողութիւն:

Կոմիտաս եւ նկարիչ Թերլեմեզեանի բնակարանը, Բերա, ուխտատեղի դարձած էր հայ մտաւորականներուն, արեւելահայ եւ արեւմտահայ ընտրանիին. բնակարանին անրաժանեկներն էին հայ եւ օտար երաժիշտներ: Հոն կը գտնուէր յաճախ մեր վարպետը՝ Աւետիք Իսահակեան:

Դեռ յիշողութեանս մէջ շատ թարմ է իմ շատ սիրելի ծանօթիս՝ երգչախումբի կառավարիչ Ետիար Մանասի այն խօսքերը, զոր ըսաւ 1926 թուի Յունիսի 26-ին, Գատը Քէօյի «Օթէլ Պէլ Վիւ» հիւրանոցի անտառակին մէջ, պատերազմի հերոս հաշմանդամներու օգտին տրուած պարահանդէսի մը պահուն, հովանաւորութեամբ Ղազի Մուսթաֆա Աթա Թիւրքի:

— Բիւրատ, այս նուագահանդէսը ոչինչ կ'արժէ մեր անմահ Կոմիտասի համերգներուն քով. ես շատ դանձեր իւրացուցած եմ վարպետէս (Կոմիտաս այն ժամանակ Փարիզ փոխադրուած էր, հօգերութեան հիւանդանոց մը):

Պէյֆոգի Բէյֆը

1913 թուի գեղածիծաղ առաւօտ մը, հայրս մեր անմահ Կոմիտասին եւ սիրելի վարպետ Աւետիք Իսահակեանին հրաւրեց երթալու Պէյֆոգ, գիւղը, Աբրահամ Փաշա Քարաքահեայի չիֆտլիկը (ազարաղը), ճաշելու Օսման աղայի պատրաստած համբաւաւոր «փաշա» (խաշը): Չորսերնիս ալ դացինք. հրաշալի քէյֆ մը բերնք միայն դարեջրով: Անմոռանալի օրը երբեք մտքէս պիտի չելլէ: Կոմիտաս երբեք մտքէս պիտի չելլէ: Կոմիտաս տա՛, Բիւրատ, կեանքիս մէջ այս դարձող




արեւք», «Հորովել», «Հայաստան» երգերը: Այդ պահուն մեր մօտ ցցուեցաւ բարակիրան, բարձր թաղիքէ մոխրագոյն «Քեչէ» քիւլահով, երկայն մոխրագոյն պատմութեանով Մեւլեւի աղանդին պատկանող չէյի մը եւ այսպէս խօսեցաւ.

— Ես, բուհուլահ բիւլբիւլ (ո՛վ աստուածային սոխակ), ահա կը ծնրադրեմ քու աստուածային շունչով պարուրուած անձիդ առջեւ. թախանձանքով կը խընդրեմ, արժանի ըրէ քու նուագը ծառայիդ լսեցնելու: Նոյնպէս կ'աղաչեմ, մի՛ մերժեր ինչ որ Դուք եւ Ձեր այս խումբը այցելէք մեր մենաստանը. ես Մեւլեւի աղանդին պատկանող Շէհիթլեր մենաստանի չէյի՝ Հաճի Բուհին եմ:

Կոմիտաս սիրալոյսով երգեց եւ միաժամանակ հրաւերն ալ չմերժեց: Յաջորդ ուրբաթ չորսերնիս ալ դացինք Շէհիթլեր մենաստանը: Մեզ պատուասիրեցին պէսպիսուն օջաւակներով եւ համբաւաւոր «Հաճի Պէրիլի», «Քահաթ Լողումի» եւ «Ալիտէ չէքերի» անուշեղէններով: Մեր վերադարձին, Կոմիտաս հօրս ըսաւ. Հաւատա՛, Բիւրատ, կեանքիս մէջ այս դարձող

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ



Հ. ՍՏԵՓԱՆ Վ. ՍԱՐԵԱՆ
(1865 — 1915)

Հ. ՊՕՂՈՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ
(1879 — 1915)

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ
(1882 — 1915)

Հ. ԹՈՄԱՍ ՕՏԱՊԱՇԵԱՆ
(1886 — 1915)

1965

101

ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ

Ամեն ինչ հայ սիրտը կը տանի հաւատին:
Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

Բոլորն ալ երիտասարդ են, երկարի պէս ամուր,
Ուժեղ՝ ինչպէս ապառաժը,
Ինչպէս ապառաժը անխախտ, որ կը կանգնի ծովուն վրայ.
Ո՞ր տափաստաններէն, ո՞ր խորխորատներէն եւ ո՞ր գեհեմներէն,
Հասած են հոս, վայելելու համար Ադրիականը,
Շրջելու համար երկնքի մը տակ, որ դրախտային լոյսերով
Շրջանակեց անոնց մանկութիւնը,
Երէկ, քնարահարն էին քերթողութեան, փողահարը իտէալին,
Առանձնութեան մէջ առանձին՝ ինչպէս կաղնին հողմերու տակ,
Այսօր հազարաւորներու սերն են, միլիոնաւորներու կեանքը,
Անոնց ոյժը, հաստատակամութիւնը, յոյսն ու խրախոյսը:

Ո՛վ դուք որ ժամադրուած էք Պայրընեան Զիքենիներուն տակ,
Ոգիներ մեծութեան, իմացութեան եւ զարհուրանքի,
Ո՛րքան տարիներէ ի վեր կը սպասէիք այս վերադարձին,
Ժամանակը կը սահի՝ ովկիանոսային շարժումներով,
Երէկուան պատանին այսօր պէտքերն է իմաստութեան ցամաքներուն,
Ըսէ՛ք, ի՞նչպէս մահացաւ ձեր կեանքը արոյրէ սրունքներու վրայ,
Ո՞ր անդունդներուն մէջ խաւարեցան ամբիժ արշալոյսները,
Ո՞ր արեգակները հորիզոն չունեցան, եւ ո՞ր աստղերը
Հեծեծագին փախան արհաւիրքի գիշերներէն,
Ո՛վ դուք յառաջընթացներ անկապտելի տեսլականներու,
Ըսէ՛ք, ո՞ւր են ձեր անխնայները եւ ո՞ւր ձեր պանքէոնը...

Յիսուն տարի ետք, յառնելով անհուն պարապին մէջ,
Հասած էք հոս գեղագանգուր՝ ինչպէս էիք երէկ,
Ինչպէս էիք երէկ՝ հաստատաբայ, միտքը լոյսերու մէջ,
Հասած էք հոս, զի բոլորիս գուրգուրանքն էք,
Ափսոսանքը, կոտորանքն ու կարօտաբաղձութիւնը,
Բոլորիս արցունքը, զայրոյթն ու մոռցիւնը...
Ո՛վ Հայրեր, որ զանոնք կ'ընդունիք Սուրբ Ղազարու մէջ,
Սփռեցէ՛ք անոնց առջեւ սիրոյ պատմութեանները,
Բացէ՛ք ձեր բագուկները, զի որդին կը վերադառնայ իր հօր,
Զի մահը կը վերադառնայ կեանքին, արօտսը՝ խնդրութեան, —
Բոլորն ալ երիտասարդ էին, երկարի պէս ամուր...

Միլանոյ, 24 Ապրիլ 1965

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ